

ՍՈՒՔԻԱՍ ԱՆԱՍՏԱՍՅԱՆ

ՀՀ ԳԱԱ Մ.Քոթանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
հայցորդ

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ ԵՎ ԴՐԱՆՑ ԼՈՒԾՄԱՆ ՄՈՏԵՑՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

Հետզհետե միջազգային փոփոխությունները հանրապետության տնտեսության առջև ծառացած նոր մարտահրավերները և առկա բազում չլուծված հիմնախնդիրները ցույց են տալիս, որ ներկայումս իրականացվող հարկային քաղաքականությունը և դրա պետական կարգավորումը չեն համապատասխանում տնտեսության արդի իրավիճակին և չեն բխում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից: Դրա մասին են վկայում հարկային բեռի բարձր ու անհամաչափ բաշխման մակարդակը, ստվերային շրջանառության մեծ ծավալները, հասարակության մեջ առկա սոցիալական բևեռացումը, տնտեսական նախաձեռնությունների ցածր մակարդակը և մի շարք այլ հիմնախնդիրներ:

Ինչպես և նախկինում, ներկայումս էլ պետության համար առաջնային է մնում հարկերի ֆիսկալ գործառնությունը, ինչը բացասաբար է անդրադառնում ինչպես տնտեսության իրական հատվածի զարգացման, այնպես էլ ազգաբնակչության սոցիալական վիճակի վրա: Տնտեսական զարգացումների հետզհետե միջազգային փոփոխությունները տնտեսության բնականոն աճ ապահովելու համար մեր հանրապետության հարկային քաղաքականության պետական կարգավորման գլխավոր թիրախը պետք է հանդիսանա տնտեսության դիվերսիֆիկացմանը հարկային լծակներով օժանդակումը, հարկերի խթանիչ դերի մեծացումը, հարկային բեռի կրճատումը, հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացումը, ներդրումների և ձեռնարկատիրական նախաձեռնությունների խթանումը:

Ներկայումս, երբ տնտեսական ճգնաժամներն ավելի հաճախակի են իրենց բացասական ազդեցությունները թողնում ինչպես համաշխարհային, այնպես էլ ազգային տնտեսությունների վրա, Հայաստանում տնտեսության պետական կարգավորման՝ այդ թվում՝ հարկային քաղաքականության ուղղությունների վերանայումը ձեռք է բերել առաջնահերթ նշանակություն:

Վերջին համաշխարհային ֆինանսատնտեսական ճգնաժամը կրկին անգամ ապացուցեց շուկայական տնտեսության պետական կարգավորման կենսունակությունը և անհրաժեշտությունը: Այս համատեքստում, տարբերակված մոտեցումներ կարող են լինել միայն տնտեսության կարգավորման գործում պետության մասնակցության սահմանների և ձևերի մեջ՝ ելնելով առանձին երկրների տնտեսության առանձնահատկություններից: Այս մոդելի շրջանակներում, պետությունն իր տրամադրության տակ գտնվող լծակներով՝ տնտեսական իրավիճակից ելնելով՝ կարող է բավական օպերատիվ կերպով՝ համարժեք փոփոխություններ մտցնել տնտեսական կարգավորման գործիքակազմում՝ նպաստելով տնտեսության կառուցվածքային փոփոխությունների իրականացմանը և առաջնահերթ տնտեսական ոլորտների զարգացմանը: Այս առումով, շատ կարևոր տեղ է հատկացվում հարկային քաղաքականությանը և դրա արդյունավետ պետական կարգավորմանը:

Փորձը ցույց է տալիս, որ յուրաքանչյուր երկրում իրականացվող հարկային քաղաքականության շնորհիվ՝ մի դեպքում կարող են ապահովվել բարձր հարկային եկամուտներ՝ հարկային դրույքաչափերի անընդհատ վերանայման ճանապարհով, որի հիմնական նպատակը բյուջեի հարկային եկամուտների ավելացումն է և համախառն ներքին արդյունքի կառուցվածքում հարկային եկամուտների տեսակարար կշռի բարձրացումը: Մյուս դեպքում, հարկային քաղաքականությունը կարող է հանգեցնել հարկային եկամուտների կրճատման և հարկերի խթանող դերի բարձրացման: Հարկային քաղաքականության մեջ նշված ուղղություններից առաջինը մակրոտնտեսագիտության

կողմից ընդունվել է որպես տնտեսությունը կաշկանդող, իսկ երկրորդը՝ որպես խթանող հարկային քաղաքականություն¹:

Տնտեսության ներկա պայմաններում հարկային քաղաքականության առաջնային նպատակը պետք է հանդիսանա հարկերի խթանիչ գործառույթի դերի մեծացումը՝ միաժամանակ ապահովելով նաև օպտիմալ հարաբերակցություն՝ այդ և ֆիսկալ գործառույթների միջև: Առանց հարկերի խթանիչ գործառույթի վրա հիմնված ճկուն հարկային քաղաքականության մշակման՝ անհնար է պատկերացնել կայուն զարգացող տնտեսություն՝ ցանկացած երկրում: Այս գործառույթների օպտիմալ հարաբերակցության շնորհիվ միայն կարելի է ապահովել կայուն պետական եկամուտներ՝ խթանելով նաև տնտեսական գործունեությունը և ներդրումները մեր հանրապետությունում: Հիմնվելով միայն հարկերի ֆիսկալ գործառույթի վրա, հարկային քաղաքականությունը մեր հանրապետությունում չի կարող ապահովել տնտեսության երկարաժամկետ զարգացման նախադրյալներ: Խթանիչ գործառույթի կյանքի կոչելու համար նախ և առաջ անհրաժեշտ է իրականացնել հարկային քաղաքականության, հարկային համակարգի և տնտեսական համակարգի բարելավման հետևողական միջոցառումների համալիր: Նշվածի արդյունքում, կարծում ենք, հնարավոր կլինի կրճատել հարկային բեռը և ստվերային տնտեսությունը, խթանել ներդրումները՝ դրանով իսկ ապահովելով տնտեսական կայուն աճի նախապայմաններ: Այս նպատակներին հասնելու համար՝ անհրաժեշտ է իրականացնել ճկուն ու արդյունավետ հարկային քաղաքականություն, որի շնորհիվ կապահովվի ինչպես պետության հարկային եկամուտների բավարար մակարդակ, այնպես էլ միաժամանակ կլուծվի վերը նշված հիմնախնդիրները:

Հայաստանի Հանրապետությունում իրականացվող հարկային քաղաքականության ոլորտում, չնայած իրականացված մի շարք օրենսդրական և վարչարարական բարեփոխումների՝ առկա են մի շարք հիմնախնդիրներ, որոնք իրենց բացասական ազդեցությունն են ունենում տնտեսության զարգացման վրա: Վերջիններից, մասնավորապես, հատկանշական են հետևյալները.

- Հարկային քաղաքականության մեջ հարկերի խթանիչ գործառույթի բացակայությունը, ինչը բացասաբար է անդրադառնում տնտեսության զարգացման և ներդրումների խթանման վրա:
- Անուղղակի հարկերի բարձր տեսակարար կշիռը, ինչը բացի ֆիսկալ նպատակներից ոչ մի տնտեսական բարենպաստ հետևանք չի ունենում, քանի որ դրա վերջնական վճարողը համարվում է սպառողը և վերջինս այդ չափով կրճատում է իր սպառումը:
- Հարկային արտոնությունների չհիմնավորված և անարդյունավետ համակարգի կիրառումը: Այս ոլորտում անհարժեշտ են բավական մանրակրկիտ և խորը վերլուծություններ՝ պարզելու տրամադրված արտոնությունների տնտեսական հետևանքները: Հարկային արտոնությունները պետք է բխեն տնտեսության զարգացման ռազմավարությունից, տարածքային զարգացման նպատակներից ու տնտեսության ճյուղային դիվերսիֆիկացիայի խնդիրներից:
- Հարկային վարչարարության կազմակերպման ցածր արդյունավետությունը, ինչն անխոս, բացասաբար է անդրադառնում հարկերի հավաքագրելիության մակարդակի վրա: Հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումը, կադրերի որակավորման բարձրացումը, հարային մարմին-հարկատու շփումների նվազեցումը, հարկային ստուգումների կրճատումը մեծապես կնպաստեն հարկային վարչարարության արդյունավետության բարձրացմանը:
- Հաստատագրված և արտոնագրային վճարներով հարկվող ոլորտների տնտեսապես չհիմնավորված և բավականաչափ մեծ տեսակարար կշիռը: Նշենք, որ հաստատագրված և արտոնագրային վճարների դեպքում՝ հարկման օբյեկտ են համարվում ոչ թե եկամուտները, այլ գործունեության տեսակները, որոնք, ի տարբերություն գործունեության մնացած տեսակների, տեղափոխվում են հարկման արտոնյալ դաշտ՝ սկիզբ դնելով հարկման սկզբունքներին հակասող անհավասար հարկման անընդունելի պրակտիկային²:
- Ֆիզիկական անձանց աշխատավարձի վրա բարձր հարկային ճնշումը: «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենքով՝ չհարկվող նվազագույն եկամտի՝ անձնական նվազեցումների

¹ «Մակրոտնտեսական կարգավորում» Դ.Ղուշչյանի խմբ., Երևան, «Տնտեսագետ», 2009, էջ 355:

² Բազրատյան Դ. Հայաստանը դարերի սահմանագծին: Երևան, «Նաիրի», 2003, էջ 190:

վերացմամբ¹ էլ ավելի մեծացավ հարկային ճնշումը ֆիզիկական անձանց առանց այն էլ ցածր եկամուտների վրա, ինչը հանգեցրեց ազգաբնակչության կենսամակարդակի էլ ավելի անկման:

- Իրավաբանական և ֆիզիկական անձանց եկամուտների և կատարվող ծախսերի նկատմամբ վերահսկողության արդյունավետ մեխանիզմի բացակայությունը, ինչը նպաստում է ստվերային տնտեսության ընդլայնմանը: Տնտեսվարողների եկամուտների և ծախսերի կապակցումը միմյանց հետ և արդյունքում հարկային մարմնի կողմից համապատասխան ճշգրտումները կնպաստեն ստվերային շրջանառության կրճատմանը և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը:
- Բազմաբանակ և անարդյունավետ հարկային ստուգումները, որոնք պարզապես ճնշող ազդեցություն են թողնում տնտեսվարողների վրա և չեն նպաստում տնտեսական նախա-ծեռնությունների խթանմանը:

Նշված հիմնախնդիրները, բնականաբար, բացասաբար են անդրադառնում ինչպես հարկային քաղաքականության արդյունավետության վրա, այնպես էլ խոչընդոտում են տնտեսական հարաբե-րությունների բնականոն ընթացքին: Այս առումով, կարծում ենք, որ հանրապետությունում առաջիկա տարիներին հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմքում, նախ և առաջ, անհրաժեշտ է դնել նշված խնդիրների լուծումը:

Վերջիններս դիտարկելով, հանգում ենք նրան, որ ներկայումս մեր հանրապետությունում գործող հարկային քաղաքականության պետական կարգավորումը բավարար արդյունավետ չէ՝ տնտեսության առջև ծառացած խնդիրների լուծման, տնտեսական հարաբերությունների հետագա զարգացման և կայուն տնտեսական աճ ապահովելու համար: Մեր երկրում հարկային քաղաքականության հիմնական գործառույթը եղել և մնում է ֆիսկալ գործառույթը, որը նույնպես բավարար արդյունավետ չէ՝ կապված հարկերի հավաքագրելիության ցածր մակարդակի, ստվերային տնտեսության մեծ չափերի առկայության հետ և այլն: Ինչ վերաբերվում է հարկային քաղաքականության խթանիչ ու բաշխիչ գործառույթներին, ապա դրանք համարյա չեն գործում, ինչը ևս մեկ անգամ փաստում է, որ ներկայիս հարկային քաղաքականությունը չունի ռազմավարական նպատակներ և չի նպաստում մեր ազգաբնակչության բարեկեցության աճին, սոցիալական բեռնացման կրճատմանը, տնտեսական գործունեության և ներդրումների խթանմանը: Սա խոսում է այս քաղաքականության պետական կարգավորման ոչ պատշաճ մակարդակի մասին: Մեր հանրապետությունում թեև վերջին տարիների ընթացքում իրականացվեցին բազմաթիվ օրենսդրական փոփոխություններ և վարչարարական բնույթի բարեփոխումներ, սակայն, դրանք ապահովեցին կարճաժամկետ «տեղային» լուծումներ՝ ելնելով կրկին ֆիսկալ նպատակներից: Արդյունքում, ինչպես տեսնում ենք, տնտեսության մեջ առկա հիմնախնդիրները գրեթե չեն վերացել:

Վերը նշված խնդիրների լուծման համար ներկայումս մեծապես կարևորվում է հարկային քաղաքականության ուղղությունների վերանայումը և տնտեսության զարգացման հետ դրանց փոխկապակցումը: Այս առումով, անհրաժեշտ ենք համարում հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմքում դնել հայեցակարգային մոտեցումներ: Այլ կերպ ասած, կառավարության կողմից պետք է մշակվի հարկային քաղաքականության հայեցակարգ, որում պետք է նշվեն հարկային քաղաքականության կոնկրետ նպատակները, ուղղությունները, գործիքակազմը և ակնկալվող արդյունքները: Հարկային քաղաքականության հայեցակարգային ուղղությունների սահմանման ժամանակ պետք է ընտրվեն այնպիսի չափանիշներ, որոնց միջոցով հաշվի կառնվեն ինչպես պետության, այնպես էլ տնտեսության և դրա իրական հատվածի, տնտեսավորողների և ազգաբնակչության տնտեսական շահերը: Այս առումով, հարկային քաղաքականության հիմքում պետք է դրվի այն սկզբունքային մոտեցումը, որ հարկերի հավաքագրումը պետք է իրականացվի ոչ միայն պետական եկամուտների ապահովման, այլև տնտեսական հարաբերությունների վրա ցանկալի ներգործություն և տնտեսության խթանման ուղղությամբ՝ պետական մակրոտնտեսական կարգավորում իրականացնելու նպատակով: Մեր երկրի տնտեսության զարգացման համար՝ հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության գլխավոր չափորոշիչը պետք է հանդիսանա տնտեսության իրական հատվածի և բուն արտադրության ոլորտի

¹ «Եկամտային հարկի մասին» ՀՀ օրենք:

խթանման կարողությունը: Հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետության բարձրացման հիմնախնդիրը կարող է լուծվել միայն համալիր միջոցառումների իրականացման ճանապարհով, որի դեպքում միայն կլուծվեն առկա հիմնախնդիրները և կբարձրանա հարկային քաղաքականության պետական կարգավորման արդյունավետությունը, ինչին ուղղված միջոցառումները պետք է իրականացվեն, հաշվի առնելով ինչպես զարգացած եվրոպական, այնպես էլ հետխորհրդային երկրներում իրականացվող հարկային քաղաքականության ձևավորված միտումները:

Կարծում ենք, որ Հայաստանի Հանրապետությունում հարկային քաղաքականության պետական կարգավորման հայեցակարգի հիմքում անհրաժեշտ է դնել հետևյալ նպատակները.

- հարկերի խթանիչ գործառույթի ընդլայնումը՝ կապակցելով այն տարածքային զարգացման, տնտեսության դիվերսիֆիկացման և ներդրումների խթանման ռազմավարության հետ,
- հարկային բեռի կրճատումը և հավասարաչափ բաշխումը,
- տնտեսության իրական հատվածում ներդրումների խթանումը՝ բարենպաստ հարկային ռեժիմ սահմանելու միջոցով,
- հարկային օրենսդրության պարզեցումը և միասնականացումը, գործող հարկատեսակների հաշվարկման ընթացակարգերի և մեխանիզմների հստակեցումը և պարզեցումը, հարկային վերահսկողության լրացուցիչ մեխանիզմների ներդրումը,
- հարկային վարչարարության պարզեցումը, ծախսատարության կրճատումը, հարկային մարմնի կառուցվածքի օպտիմալացումը և հարկերի հավաքման մակարդակի բարձրացումը,
- հարկատուների համար հարկման հավասար և արդար պայմանների ապահովումը,
- անուղղակի հարկերի աստիճանական կրճատումը,
- հաստատագրված և արտոնագրային վճարների համակարգից աստիճանական անցումը տարբերակված արդյունավետ հարկային դրույքաչափերի կիրառմամբ հարկման համակարգի,
- տնտեսվարող սուբյեկտների, դրանց ղեկավարների, ու վերջիններիս հետ փոխկապակցված անձանց ծախսերի վերահսկման համակարգի ներդրումը, ինչը կնպաստի ստվերային շրջանառության կրճատմանը և հարկերի հավաքագրելիության մակարդակի բարձրացմանը:

Ամփոփելով, նշենք, որ հարկային քաղաքականությունը՝ պետական արդյունավետ կարգավորման շնորհիվ, ի թիվս իրեն բնորոշ այլ գործառույթների, կվերածվի մեր հանրապետության տնտեսության զարգացմանը խթանող կարևոր լծակի:

ՀԱՐԿԱՅԻՆ ՔԱՂԱՔԱԿԱՆՈՒԹՅԱՆ ՊԵՏԱԿԱՆ ԿԱՐԳԱՎՈՐՄԱՆ ՀԻՄՆԱԽՆԴԻՐՆԵՐԸ
ԵՎ ԴՐԱՆՅ ԼՈՒԾՄԱՆ ՍՈՏԵՅՈՒՄՆԵՐԸ ՀՀ-ՈՒՄ

ՍՈՒՔԻԱՍ ԱՆԱՍՏԱՅԱՆ

*ՀՀ ԳԱԱ Մ.Զոքանյանի անվան
տնտեսագիտության ինստիտուտի
հայցորդ*

Համառոտագիր

Հետզհետե փոփոխվող մեր հանրապետության տնտեսության առջև ծառացած նոր մարտահրավերները և առկա բազում չլուծված հիմնախնդիրները ցույց են տալիս, որ ներկայումս իրականացվող հարկային քաղաքականությունը և դրա պետական կարգավորումը չեն համապատասխանում տնտեսության արդի իրավիճակին և չեն բխում հանրապետության սոցիալ-տնտեսական զարգացման նպատակներից: Հոդվածում նկարագրված են հարկային քաղաքականության պետական կարգավորման հիմնախնդիրները ՀՀ-ում: Հոդվածում ներկայացված են նաև հարկային քաղաքականության պետական կարգավորման ոլորտում առկա հիմնախնդիրների լուծման հիմնական մոտեցումները և ուղղություններ ներկա փուլում:

Բանալի բառեր. *հետզհետե փոփոխվող, մարտահրավերներ, պետական կարգավորում, հարկային քաղաքականություն, հիմնախնդիրներ, տնտեսություն, խթանում, միջոցառումներ, մոտեցումներ, հարկային վարչարարություն:*

ПРОБЛЕМЫ ГОСУДАРСТВЕННОГО РЕГУЛИРОВАНИЯ НАЛОГОВОЙ ПОЛИТИКИ
И ПОДХОДЫ К ИХ РЕШЕНИЮ В РА

СУКИАС АНАСТАСЯН

*соискатель Института экономики
им. М.Котаняна НАН РА*

Аннотация

Новые вызовы, стоящие перед экономикой нашей республики в посткризисный период, и имеющиеся многочисленные нерешенные проблемы свидетельствуют о том, что проводимая в настоящее время налоговая политика и ее государственное регулирование не соответствуют современному состоянию экономики и не вытекают из целей социально-экономического развития республики. Статья посвящена проблемам государственного регулирования налоговой политики в РА. В статье представлены также основные подходы и пути решения существующих проблем в сфере государственного регулирования налоговой политики на нынешнем этапе.

Ключевые слова: *посткризисный, вызовы, государственное регулирование, налоговая политика, проблемы, экономика, стимулирование, мероприятия, подходы, налоговое администрирование.*

ISSUES ON STATE REGULATION OF THE TAX POLICY
AND APPROACHES TO ADDRESS THEM IN THE REPUBLIC OF ARMENIA

SUQIAS ANASTASYAN

*Ph.D. Student
M. Kotanyan Institute of Economics
National Academy of Sciences
Republic of Armenia*

Abstract

New challenges and many existing unaddressed issues the economy is facing in the post-crisis stage show that the tax policy currently implemented and its state regulation do not back the current economic stance and are not in line with the socioeconomic development goals of the Republic. The article presents the issues of the state regulation of the tax policy in the Republic of Armenia. The article presents the main directions and approaches to addressing the issues of the state regulation of the tax policy as well.

Keywords: *post-crisis, challenges, state regulation, tax policy, issues, economy, promotion, measures, approaches, tax administration.*